Է.

ԹՈՒՂԹ ՀԱՅՈՑ ԼՈՎԱՑ ԱՌ ՄԻՔԱՅԷԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ

15 ԱՊՐԻԼԻ, 1572.

(Պատուէն զՆուիրակն Տէր Մարտիրոս Ամդեցի. խնդրեն թոյլտուութիւն մեր-ձաւոր խնամուոքեան, վասն սակաւուքեան ազգայնոց։)

ՈՒՐ մաքրութեան և տեղի հանգստեան, լայնատարած բուրաստան և այգի ցանկապատ՝ լրմամբ բոլորեալ, և կենաց հանգստարան, օտարաց և կարօտելոց ասպնջական. արև լուսատու և 9[1] երկրի. զամենեսեան լիացուցանէք. անուամբ բարի և տեսլեամբ գեղեցիկ, բարեմիտ և իմաստուն.

Դուք աղբիւր էք գովելի,
Ցոյժ բարեհամ անճառելի.
Անմուտ արև էք աշխարհի.
Քննող տառից աստուածային,
Լուծող անյայտիմաստ բանին,
Լցեալ շնորհաքն աստուածային.
Նման ովկիանոս ծովին,
Ուռճացելոյ մեծ աղբեւրին,
Սաղարթախիտ փթթեալ վարդին,
Վարսաւորեալ նման նմին։

Երևելի և ականաւոր և ամենայն ուրեք ցանկալի, յամենայն լեզուէ գովեալ և յամենայն բերանոյ բարեբանեալ, յամենայն սրտից սիրեցեալ և ամենայն մտաց տենչացեալ. պարծանք պարծանաց և պսակ ամենայն Հայաստանեայց, հզաւոր հայր մեր, Տեառնդ մերոյ Տէր Միքայէլ, կաթողիկոս ամենայն Հայաստանեայց։

Այս ձեզ սակայն գովեստ և բան
Փոքր ի շատէ ձեզ բաւական.
Զի ձեզ հրեղէն պիտի բերան՝
Զիրաւացին տայ և զարժանն.
Բայց դուք միշտ լոյս էք անխափան
Գործով մաքուր և սրբազան,
Ի գիշերի և ի տուընջեան.
Միջօրէի լուսոյ նման.
Եւ ոչ լուսինն է ձեզ նման,
Զի նուաստանայ և առնու զվաղջան.
Բայց դու հաստատ կաս և փարթամ
Միշտ անսպառ և անվախճան.

1. Այս փակագիրս բացուելու կարօտի. նման ձեւք նշանակեն լուսին, արդեւ, բայց այս տեղ մանաւանդ վարն այլ՝ չի յարմարիր այս քառերուս։